

**ԿԱՊԱՅԻՆ ՈՒ ՆԱԽԴՐԱՎՈՐ ԿԱՌՈՒՅՑՈՎ ԼՐԱՑՄԱՆ ԵՎ ԳՈՅԱԿԱՆ ԼՐԱՑՑԱԼԻ
ԿԱՊԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆՈՒՄ**

Ա. Ժ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Գոյական լրացյալի և կապային (նախդրավոր ու նախադրությամբ) կառույցների կապակցութիւնները բառակապակցական մակարդակի իրողութիւններ են, որոնք ինքնատիպ են և՛ կառուցվածքի, և՛ իմաստային արտահայտութեան, և՛ գործառութեան նկատառումներով: Դրանցում հետաքրքրութիւն են ներկայացնում ինչպես լրացյալ գոյականի, այնպես էլ լրացումը ձևավորող կապերի, նաև նախդիրների ու նախադրութիւնների իմաստային, ծագումնաբանական հատկանիշները:

Արևմտահայ քերականութեան մեջ, տարբեր առիթներով շնայած անդրադարձել են կապով ու կապի խնդրով լրացում ունեցող գոյականական բառակապակցութիւններին, սակայն դրանց կառուցվածքային-իմաստային մի շարք իրողութիւններ կարոտ են համակողմանի հետազոտման:

Փորձենք ամբողջական, ամփոփ տեսքով ներկայացնել գոյական լրաց-
յալ+կապային կառույց կաղապարը կազմութեան, բաղադրիչների իմաստա-
յին հարաբերութիւնների բացահայտման, նրանցում լրացումների և լրաց-
յալների, որպէս որոշակի խոսքի մասերի պատկանող բառերի և առանձին
բառական միավորների, վերլուծութեան տեսանկյունից:

Արևմտահայերենում կապային ու նախդրավոր կառույցներով լրացման
և գոյական լրացյալի կապակցութիւնները տարածված են և հաղորդման մեջ
լրացական իմաստների ձևավորման երբեմն ւնիփոխարինելի միջոցներ են:
Լինելով արդի գրական հայերենի մի տարբերակը՝ արևմտահայերենը զար-
գացել է սոցիալ-քաղաքական տարբեր պայմաններում, որի հետևանքով էլ
նրանում քերականական իրողութիւնները հանդես են բերում տարբերու-
թիւններ: Արևմտահայերենի քերականութեան թերևս ամենաբնորոշ հատ-
կանիշն այն է, որ արևմտահայերենը դեռևս շատ թելերով կապված է հայե-
րենի նախորդ շրջանների (գրաբար, միջին հայերեն) հետ, և նրանում կողք
կողքի հանդես են գալիս և՛ կապերով, և՛ նախդիրներով ու նախադրութիւն-
ներով դրսևորվող լրացումները: Դա հետևանք էր նախ այն բանի, որ արե-
մտահայ հնդկականները հակված են պահպանելու գրաբարյան անվթար
կապակցութիւնները և դրանց արդեն խաթարված ձևերը, ապա՝ նախդրա-
վոր և նախադրությամբ կառույցները տեղի են տալիս նոր ձևերի՝ կապային
կաղապարների:

Թեև, սկսած Մ. Արեղյանից, նախդրի և նախադրութեան փոխարեն արե-
վելահայերենի համար գործածվում է կապ անվանումը, բայց բոլոր դեպքե-
րում խոսքը վերաբերում է քերականական միևնույն երևույթին: Ուստի ռեա-
կան կառուցվածքային տարբերութիւն չկա ճախդիք+խնդիք և կապ+խնդիք
կառույցների միջև¹, քանի որ դրանք արտահայտում են շարահյուսական-
իմաստային նույն բնույթի հարաբերութիւններ:

Ժամանակակից արևմտահայերենի շուրջ 100 կապերից, որպես գոյա-
կանի իմաստային ամենատարբեր ծավալումների իրացման միջոցներ,
առավել ակտիվ գործածվում են հետևյալները, որոնք կամ գրաբարյան նախ-
դիրներ (առ, բնդ, բստ, ի) ու նախադրութիւններ են (առանց, դէմ, դէպ,
յանդիման, յետոյ, շուտ, պէս), կամ՝ նախդրավոր կառույցներ (ընդմէջ, ի

¹ Տե՛ս Վ. Ա. Քսոյան, Բառակապակցական կաղապարների զարգացումը հայերենում,
Երևան, 1990, էջ 309:

պատիւ, ի վար, ի վէր և այլն), առաջացել են կամ նախադրութիւնների հնչյունափոխութիւնից և նախդրի անկումից առաջ, առջև, մէջ, վրայ և այլն), կամ գրաբարյան նախադրութիւն և նախդրի միացմամբ (դէպի՝ դէպ+ի), կամ հոլովածների քարացմամբ, ինչպես՝ առքիւ, դուրս, մասին, ներս, միջոցաւ, նկատմամբ, շնորհիւ, կամ էլ արևմտահայերեն հոլովածներ են՝ երեսէն, կողմէ, կողմից, կապակցութեամբ, հասցէին և այլն²։

Որպես շարահյուսական յուրահատուկ կառուցվածքներ, կապային կառուցներով գոյականական բառակապակցութիւններն արևմտահայերենում քաղցածիւրման հարցում տարբերութիւն հանդես չեն բերում արևելահայերենի նույնանման կապակցութիւնների համեմատութեամբ։ Արևմտահայերենում քերականական այդ կաղապարներն ազատորեն գործածվում են և՛ այն դեպքում, երբ լրացյալի անհրաժեշտ իմաստային ծավալումն ունի միայն կապային լրացումով արտահայտութիւն, և՛ այն դեպքում, երբ կապային կառուցով լրացումն ունի հոլովական տարբերակ։ Սա ցույց է տալիս, որ այդ կարգի բառակապակցութիւններն ունեն զարգացման միտում և բնորոշ են նաև արդի հայերենի արևմտյան ճյուղին։ Նույնանում են նաև այս կարգի կապակցութիւնների գործառութային առանձնահատկութիւնները։ Դրանք հանդես են գալիս վերնադրային-անվանողական կապակցութիւններում և դիմավոր նախադասութիւններում։

Արևմտահայերենում գոյականի լրացումներ ստանալու հատկութիւնը պայմանավորված է մի շարք հանգամանքներով՝ լրացյալի խոսքիմասային, բառային, բառակազմական հատկանիշները, սերումը, ինչպես նաև՝ կապերի առաջացման գործոնը, բայի զեղչումը։

Այստեղ կապն (նախդիրը և նախադրութիւնը) ու իր խնդիրը ավելի հաճախ լրացում են դառնում բայանուն և ածականական, հաճախ նաև՝ մակբայական ծագմամբ գոյականներին։ Այդ կապակցութիւնները հիմնականում արտահայտում են այն հարաբերութիւնները, ինչպիսիք կան կապային կառուցների և լրացյալ գոյականներին հարաբերակից բայերի, ածականների և մակբայների կապակցութիւնների մեջ։

Ելլալիս՝ հանգման իմաստ արտահայտող մի շարք բայերին հատուկ վրա + սեռական, տրական, կամ դեմ + տրական կառուցներով լրացում ստանում են նաև նույնարմատ բայանունները, օրինակներ՝

Երբ քանի մը շարաթ ետքը ստացավ Կ. Պոլսո հայ թերթը, երբ տեսավ կուսակցութիւններու խելահեղ արշավանքը նույն «Բյուզանդիանի» վրա... (ԾՈՂՓ, 28)։ Հաղթանակը շահին վրա կատարյալ է (ԾՔԺՇ, 167)։ Երբ պիտի տեսնեմ իմացական քաղաքի մը կերտումը հայերենի հաղեբուն վրա (ն. տ., 269)։ Բազմ մը՝ մտածումի բռնակալ կաշկանդումին դեմ (ՆՍԾ, 265)։

Կամ հետևյալ կապակցութիւններում կապով ձևավորված լրացումները դրվել են ածականական կամ մակբայական ծագումով գոյական լրացյալների իմաստի պահանջով։

Կին մի հիվանդանոցի մեջ կը փակեն ի պատիժ յուր անհավատարմութեան ամուսնուն նկատմամբ (ԳԶԾԺ, 2, 3)։ Շուրջիներուն մեջ ծայր կառնե ներքին ընդհանուր թշնամանք մը մօրս հանդեպ... (ՍՊ, 2, 123)։ Էյուպի մեջ երկու սուրբ կա, որ իրսորմե կես ժամու շափ հեռավորութուն ունին (ՀՊԾ, 3, 139)։

Դեռ ավելին՝ երբեմն բայը ստանում է հոլովական լրացում, իսկ նրանից սերված գոյականը նույն իմաստը իրացնում է կապային կառուցի միջոցով։ Այդպիսի գոյականներից են՝ առեւտրային, զգվանք, սեր, հարգանք, արհամարհանք, նվիրում, վառահայտուն, հավատք, նախադիմ, հաղթանակ և այլն։

Քանիներ չհասկացան զինք, որովհետև չհասկացան իր սերը՝ թաղին Եկատամբ (ԳԱՍԿ, 89)։ Դատավորի զգվանքը աղամանդի հանդեպ ավելի

² Նույն տեղում։

խոր ակունք մը ունենալու էր (ՍԳ, 286): Հիմա կը հասկնա՞ս թե որտեղ են կուգա իր վստահությունը դեպի ինձի (ԼՇԸՆ, 339):

Առանձին կապակցություններում կապային լրացման առկայությունը պայմանավորվում է կազմության բաղադրյալ լրացյալի մեկ բաղադրիչով, օրինակ՝

Գործարանատեր Մակար Մրկոյանը, որ իմացած էր մեր այցելությունը և բանվորներին հետ մեր խորհրդակցությունը, աճապադեմ մեր մօտ (ԾՕԸՓ, 152):

Սակայն հաճախ նկատվում է խնդրառական տեղաշարժ. մի շարք բալական և ածականական սերմամբ գոյականներ ստանում են արմատակից բայերից և ածականներից տարբեր կապերով արտահայտված լրացում, ինչպես՝

Շատ կուզեինք, որ Ձեր աշակերտը Աթենքի վերոհիշյալ ճաշարանատիրոջ մասին իր գայությունը նամակով մը կամ որևէ դրությամբ արտահայտեր (ԲԱԱՆ, 12): Հիմա կը հասկնա՞ս թե որտեղ են կուգա իր վստահությունը դեպի ինձի (ԼՇԸՆ, 339):

Արևմտահայերենում գործածական են այսպիսի կաղապարներ, որոնք խորթ են արևելահայերենի համար.

Քիչ հետո՝ Տեր Սահակ սթափեցավ, բացատրեցի իրեն թե՛ իր կյանքին մասին որևէ վտանգ չի սպառնար... (ԾՕԸՓ, 84): Կենդանիներու մասին այս բարեացավամտությունը չափ ու սահման չունի (ն. տ., 332): Բայց ինչու պատմություն և ոչ թե պատմածք՝ Պողոսին վրա (Մ, 51): Մանկավարժը արձանագրված տեղեկություններուն վրա ուշադիր ակնարկե մը և տքը կրոններ ալուն ձեռքեն (ԾՆ, 63): Հինգ տարվա փորձառությունս Ամերիկայի մասին՝ չորս տողով ամփոփեմ հոս... (ԳԱՆ, 343):

Բառակառուցության լրացյալը երբեմն կարող է իր հերթին լինել մեկ այլ կապային կառույցի խնդիր, ինչպես՝

Երկու շաբաթե ի վեր անընդհատ շփման մեջ եմ գլուղի բոլոր բնակիչներու հետ (ԾՕԸՓ, 33):

Սովորաբար կապային կառույցով լրացում ունեցող լրացյալ գոյականները նախադասության մեջ գործածվում են ուղղական կամ հայցական հոլովներով: Սակայն դրանք հանդիպում են նաև թեթև հոլովաձևերով գործածված:

Կը մորմոքի ընտանիքն իր ջանքերուն սին փռչիին յանդիման (ԴՎԸ, 432):

Կապային կառույցով լրացումը կարող է վերաբերել մեկից ավելի լրացյալների, որոնք համադասական հարաբերության մեջ են միմյանց նկատմամբ, օրինակ՝

Քիչ ժամանակվա մեջ դպրոց հաճախողներու թիվը բազմացավ, միաժամանակ դեպի մայրենի լեզուն անոնց հետաքրքրությունը, սերը աճեցավ (ՍՊ, 2, 152):

Կան դեպքեր, երբ կապային կառույցի համադաս լրացյալները նույն տիպի լրացում են առնում, թեև դրանցից մեկը այդ ձևով խնդիր չի պահանջում, օրինակ՝

Արդուրահման աղային մտերմությունն ու համակրանքը այդ «առյուծներուն» հանդեպ նոր չէր (ՍՊ, 2, 70):

Հաճախ էլ մեկ լրացյալի համադաս լրացումները ձևավորված են լինում տարբեր կապերով.

Մանկություն էր կիսամերկ, բոպիկ ու թշվառ մեր գայությունը սալաբարեուն վրա, ցուրտին ու անձրևին մեջ (ԱՄՄՁՄ, 4): Նարեկացին հասած է այն հազվագեղ վիճակին, ուր ալ կտրված է աշխարհեն, տեսակ մը հոգեմ վեր, մարմնեն դուրս կյանքի մեջ (ԱԶՆ, 274):

Կամ էլ կապային կառույցին համադասվում է հոլովական լրացումը, օրինակ՝

Կուզեմ որ մտածես զիս մտա՞ծեմ քեզ զիս քո: մեջդ-քեզմով մտածեմ ճարտարությունը ինձի հետ ու կյանքին (ՄԳ, 225):

Պետք է նշել նաև այն հանգամանքը, որ բայանուն գոյականները երբեմն կարող են ստանալ կապային կառույցով արտահայտված մեկից ավելի լրացումներ, որոնք իրար նկատմամբ համադաս չեն: Դրանցից մեկը սովորաբար դրվում է լրացյալի բառային իմաստի պահանջով, մյուսը, ըստ էության, ազատ պարագայական բնույթի լրացում է: Այդպիսի կազմավորումները բայանվան՝ բայի հատկանիշների շնորհիվ բազմարժեքայնության դրսևորում են:

Ավելի ակտիվ են տեղի իմաստով կապային կառույցները, որոնք հանդես են գալիս տարբեր իմաստներով այլ կապային կառույցների հետ՝ չլրացման դերում: Բերվող օրինակներում նշվում են լրացումների իմաստափոխ արտահայտությունները:

ա) Տեղի և ներգործող խնդրի՝ Պարագաներու բարեպատեհ դասավորումով մը խնայված էր իրեն հավանական նվաստացումը մը ճանաչության մէջ՝ տոմսավաճառներուն մեկուն կողմէ (ՄՊ, 2, 35):

բ) Տեղի և ձև-միջոցի՝ Հիմա պատմե տեսնենք ձեր փախուստը Քարսուան դեպի Կիպրոս՝ լաստի մը վրա (ԾՈԼՓ, 219):

գ) Տեղի-ձևի և միջոցի-ձևի՝ Կը հիշեր իր ավարտական ճառի օրը, ինչ հանդիսավոր երդումը Հիպոկրատին գլուխին վրա, ընկերներու, դասատուներու ժողովրդի բազմությամբ մը առջև (ԱԶԵ, 32):

դ) Հաղորդման և վերաբերության (այս օրինակներում երկու լրացումներն էլ դրված են բայանվան բառային իմաստի պահանջով):

Այժմեական օրվա հարցը, ինչպես հայտնի է, պարոն Արշարունի պատրիարքի դիմումն է իթթիհատի կուսակցության մօտ Օսմ. խորհրդարանական բնտրությունների մասին (ԾՈԼՓ, 230):

Արդի հայերենի արևմտյան ճյուղին բնորոշ այս կապակցությունների դրսևորման ամենից տարածված ձևերից մեկը բայ զեղչումն է, երբ լրացումը վերաբերում է ոչ թե գոյականին, այլ զեղչված դերբային: Նման կաղապարները զարգացման միտում ունեն և հաճախադեպ են հատկապես տեղի իմաստ արտահայտելիս, օրինակ՝

Փախչի՞լ-հետո ինչպես նայել հայելիին, ինչպե՞ս շարժամարհել իր պատկերը հայելիին մեջ (ԳԱՍԿ, 90): Հետևաբար նա առաջարկեց ամենախիստ պատիժը՝ ըմբոստ ընկերների դեմ (ԾՈԼՓ, 146): Հետո, կասկածի ու սրտադողի հեքոտ պահերն են տքը, որոնք շես հասկնար թե ինչպես կերկարին ու կերկարին անհատնում, ծանոթ, սիրելի ոտնաձայները սանդուղհներու վրա... (ՄՊ, 2, 511):

Ձեռով սրանց նման են, բայց էությունմբ տարբեր այն կապակցությունները, որոնցում կապային կառույցով լրացման առկայությունը պայմանավորվում է ոչ թե լրացյալի հատկանիշներով, այլ նախադասության կարգերով, ինչպես՝

Երեկոյան վերադարձավ աշխատանքեն, խորհրդավոր ժպիտ մը շրթներուն վրա (ԳԱՍԿ, 25): Աչքերուս մեջ հիմա արցունք միմիայն Ու տառապանք անսահման (ՍԲ, 403):

Ուսումնասիրության առարկա կապակցությունների առանձնահատկությունն այն է, որ բուն գոյականի լրացման դերում դրանք ավելի կըշտույթային են, ինչը արևելահայ քերականությանը բնորոշ հատկանիշ է: Այս կարգի բառակապակցություններում լրացումը ձևավորվում է ածականների և գոյականների անփոփոխ ձևերի քաղաքամբ առաջացած պիս, նման, ճամաձայն, կից, շափ և այլ կապերով: Այսպիսի բառակապակցություններում կապային կառույցով լրացումը դրվում է գոյական լրացյալից ինչպես առաջ, այնպես էլ հետո: Օրինակներ՝

Աշակերտներեն հաղթանդամը արցանի պես ձեռքերովը անանկ մը սեղմեց տղուն դաստակը (Մ, 45): Ինչ պետք էր անել վաճի կից պարտե-

զին մեջ չտնված մի հարյուրի չափ ծառեր (ԵՕԸՓ, 198): Ո՞վ կարող է մոռանալ իր կապարենց Կարոն իր նշգրտելի պեռ սուր աչքերով ու իր կրակոտ շարժումներով, հակառակ տարիքի (ՄՊ, 2, 86):

Առարկայանիշ դոյականի լրացումը նրա հետ կապելու դեր ունի նաև առանց կապը, որն իր խնդրի հետ բացառման իմաստով սովորաբար դառնում է բայի լրացում: Սակայն լեզվում այն գործածվում է ան-ժխտական նախածանցի նշանակությամբ և հենց այդ իմաստով էլ, որն արդեն ածական է, դառնում է գոյականական բառակապակցության բաղադրիչ, ինչպես՝

Առանց կարկատանի անդրավարտիք շունի (ՄՊ, 2, 55): Գերեզմանատան մեջ սուռնեց ծառ, առանց մարմարե խաչի անկյուն մը տեսա՞ր (ն. տ., 62):

Երբեմն կապային կառույցը ինչ-որ չափով կարող է վերաբերել նաև ստորոգյալին, այդպիսի դեպքերում լրացումն ստանում է խնդրային իմաստի երանգ: Օրինակ՝ հետևյալ նախադասություններում կապային կառույցներն ունեն համապատասխանության իմաստային նրբերանգ: Օրինակ՝

Դպրոցին համեմատ հազուստ-կապուստ պետք է (ՄՊ, 2, 79): Մեր նպատակն է վերականգնել կործանված հայրենիքը, տալով անոր սրտի պահանջներու համաձայն կազմակերպություն (ԵՕԸՓ, 161):

Երբ կապային կառույցով լրացման և լրացյալի միջև կա ածական, ապա ստեղծվում է երկակի մեկնաբանություն՝ կապային կառույցը կարող է վերագրվել կամ ածականին, կամ գոյականին:

Սարոյանի նման լուրջ գրողներ բազմիցս ստորագրած են անոր էջերուն մեջ (ՄԳ, 271): Կուպրի այես սև մորթիին համար տրված չէին այդ բլենները (ն. տ., 281):

Երբեմն էլ կապային կառույցը կարող է վերագրվել թե՛ բայանվանը, թե՛ ածականին և թե՛ բային:

Թունավոր նետերու նման ցասկոտ բացագանչություններ արձակեցին, որոնք ուղղակի միավեցան տղուն սիրտը (ՄԴ, 238):

Հանդիպում ան բառակապակցություններ, որոնք լրացյալը կրկնվում է որպես իր լրացում կապի խնդրի, ինչպես՝

Պահածոյի խոշոր տուփի պես տուփ մըն ալ դրավ շան զգեստներուն բով (Մ, 42):

Կրկնությունից խուսափելու համար նման դեպքերում կապի խնդրին ավելի հաճախ փոխանվանական սեռականով է հանդես գալիս, օրինակ՝

Պատահեցավ ինչ որ պիտի պատահեր ձերին նման ֆաղափի մը մեջ (Մ, 15):

Պատահում է, որ կապային կառույցը լրացում է դառնում նաև գոյականաբար գործածված ածականին կամ թվականին: Նման դեպքերում հնարավոր է տվյալ կապակցություններում լրացում ստանալը վերագրել ոչ միայն գոյականաբար գործածված ածականին և թվականին, որոնք փոխանվանական դերում էլ պահպանում են կառույցներով իրենց լրացումները, այլև լրացյալի գոյականական բնույթին, օրինակներ՝

Ինձի պես չֆավորին մեկը ըլլալու է (ՄՊ, 2, 121): Ինձի պես հազարներ կան, պատերազմը գնաց, մենք մնացինք (ԳԱԱԿ, 57):

Հանդիպում են նաև գոյականաբար գործածված դերբայներ, որոնք պահպանում են կապային կառույցով լրացումը: Օրինակ՝ Ամուսնական հարգերու շուրջ չգիտցածը չկա (ՄՊ, 256): Իմ աչքերուս մեջ տեսածդ գութն է (ՄՄԵ, 232):

Ասենք նաև, որ կապային ու նախդրավոր (նաև նախադրությամբ) կառույցներով լրացումները ժամանակակից արևմտահայերենում ունեն իմաստային լայն ընդգրկում: Թեև գոյականի լրացման դերում այդ կառույցներն առաջանում են հատկանշային, խնդրային և պարագայական հարաբերություններ, սակայն նախադասութիւն շարահյուսական կառույցում ունեն միայն մեկ անգամի՝ որոշչի պաշտոն: Խնդրային իմաստով լրացումները

խիստ բնորոշ են բայանուն և ածականական հիմքով գոյականներին: Պարագայական զանազան հարաբերություններ արտահայտող բառակապակցություններում լրացյալ են դառնում հիմնականում բայանուն, սակավադեպ՝ ածականական ծագմամբ գոյականները:

Հաճախադեպությամբ բարձր են հանգման, վերաբերության, փոխադարձ գործողության, սահմանափակման, ներգործող խնդրի, ընդդիմության, շահի, խնդրային ուղղության, միասնության, տեղի, նպատակահատկացման, չափի իմաստներ արտահայտող բառակապակցությունները: Այս իմաստները ժամանակակից գրական հայերենի երկու հատվածներում էլ հաճախ արտահայտվում են նույնափոխ կառույցներով, երբեմն էլ՝ տարբեր: Այսպես՝ արևմտահայերենում փոխադարձ կապի իմաստ արտահայտող գոյականական բառակապակցություններում լրացումները ձևավորվում են հետ, միջև կապերով, երբեմն էլ ընդ նախդրով կամ դրա և մեջ կապի ղուգորդումով (ընդմեջ):

Լրացյալ են դառնում հիմնականում փոխադարձ գործողության դասարար արտահայտող բայանուններ. հազվադեպ նաև ածականական ծագմամբ գոյականներ՝ կապ, խաղ, բախում, մարտնչում, առնակառում, ամուսնություն, բանակցություն, մեհմուրթություն, ծանոթություն, խորհրդակցություն և այլն:

Նկատելի է, որ, կապի կամ նախդրի բառային իմաստով պայմանավորված, տարբերություններ են դրանում լրացական կառույցի կազմության մեջ: Հետ կապով, ընդ նախդրով կառույցում խնդիրը կարող է դրվել եզակի կամ հոգնակի թվով, միջև, մեջ, ընդմեջ կապերը ստանում են միայն հոգնակի խնդիր՝ նշելով փոխադարձ կապի եզրերը կամ առանձին-առանձին, կամ միասնաբար, հոգնակի թվով:

Երբեկից մտածած ես սև աղջկա մը հետ ամուսնության անկարելիության մասին (ՄԳ, 288): Մեծահամբավ և ազգասեր վաճառական մեծապատիվ Հակոբ էֆենդի... յանի նշանատվության հանդես էր ընդ համեստափայլ օրհորդ Սոֆի...յանի (ԱՄԵ, 64): Քառասունհինգ վերջ, ու տեղ, կապվելինք փոխնիփոխ ընդ մեջ հոգվում և մարմնում բախումներում ահարկու (ՎԹԵ, 209):

Ժամանակակից արևելահայերենում փոխադարձ գործողության հարաբերությունն արտահայտելու համար առավել բնական են հետ, մեջ, միջև, դեմ կապերով կառույցները:

Պետք է նշել նաև, որ հաճախադեպ իմաստային արտահայտություններն անխառն չեն լինում՝ նրանցում զգացվում են լրացական այլ իմաստների զուգակցումներ: Իմաստային համատեղության երևույթը կապվում է և՛ լրացյալի խոսքիմասային ու բառային նշանակությունների, և՛ կապի բազմիմաստության երևույթի հետ:

Օրինակ՝ միևնույն բայանուն գոյականը տարբեր կապերով ձևավորված կառույցներում լրացումներ ստանալիս յուրաքանչյուր անգամ արտահայտում է, ընդհանուր հանգման հարաբերության հետ միասին, նաև այլ տարբեր իմաստային համատեղումներ, տվյալ դեպքում՝ փոխադարձ կապի (հետ կապով կառույց) և ընդդիմության (դեմ կապով կառույց):

Բախումն Կարպիսին հետ ի նպատակ ինձի չէր կրնալ վերջանար (ԱՄՄՁՄ, 15):

Գոհունակությամբ կզգար հակընդդեմ գաղափարներու բախումը իր կարծիքներում դեմ (ԶԵԵ, 291):

Դեմ կապը բազմիմաստության շնորհիվ հանգման իմաստը համատեղում է վերաբերության հարաբերության հետ, ինչպես՝

Խնչ է, մասնավորաբար, այդ կեղտոտ պուրժուաներու զանգառը մեզի դեմ (ԵՕԸՓ, 120): Եվ ահա, օրերու խոռվեքն վերջ՝ ցատում մը խռվեքն դեմ (ՆՍԵ, 226):

Առանձին բառակապակցություններում բայանուն գոյականի բառային նշանակության հիմքով համատեղվում են հանգման խնդրային և պարագայական հարաբերությունները:

...Տաս տարեկանիս իսկ կ'երազեի կայծակին այցելությունը սենյակի ու ներս... (ՆՍԵ, 231): Ամիս մը ետք՝ սկսավ մեծ գրոհը Թեյ Զաթաթի պեմ (ԳԱՍԿ, 72):

Նկատված է, որ ժամանակակից գրական արևմտահայերենում խիստ տարածված են անվանական-վերնադրային այն բառակապակցությունները, որոնցում լրացման դեր են կատարում կապերով, երբեմն նաև նախդիրներով ձևավորված կառույցները: Այս կարգի բառակապակցություններում լրացյալ են դառնում մի դեպքում հանապարհաբարություն, հարցադրություն, հակառակման, ապառքավորություն, պատասխան, շարժում, ապավառություններ, որոշումներ, ուղեորություն, նվաճումներ և նման այլ բայանուններ, մյուս դեպքում՝ բուն գոյականներ, որոնց՝ կապային կառույցով չլրացված վերաբերում է գիտակցվող դերբային:

Երկու դեպքում էլ լրացման և լրացյալի իմաստային հարաբերությունները նույնն են, ինչ արդեն քննված բայանուն գոյականով լրացյալ բառակապակցությունների մեջ: Օրինակ՝

ա) Փոխադարձ կապի հարաբերություն՝ Զույց գերեզմանափորի հետ (ՍՊ, 2, 60):

բ) Հաղորդման հարաբերություն՝ Պատասխան առ Լուգ Ֆելա (ՄՐ, 51):

գ) Սահմանափակման հարաբերություն՝ Դիվանագիտական պատերազմ տասներկու հալաթի վրա (ՍՓ, 22):

Այսպիսով, բերված փաստարկները բավականին հիմք են տալիս պնդելու, որ կապային ու նախդրավոր կառույցով լրացման և գոյական լրացյալի կապակցություններն արևմտահայ քերականական կառուցվածքի մեջ կարևոր դեր ունեն և առանձին ձևերով են տալիս խոսքին:

ՀԱՄԱԿԱՐԳԱԿՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱԶԵ — Ա. Զոհանյան, Երկեր, Երևան, 1966:

ԱՄԶՄ — Ա. Մառուկյան, Մանկություն շունեցող մարդիկ, Երևան, 1963:

ԱՍԵ — Ա. Սեմյա, Երկեր, Երևան, 1966:

ԳԱԵ — Գ. Աղդարյան, Երկեր, Երևան, 1988:

ԳԱՍԿ — Գ. Աղդարյան, Սև և կարմիր, Երևան, 1979:

ԳԶԵԺ — Գ. Զոհրապ, Երկերի ժողովածու, հ. 1—2, Երևան, 1962:

ԴՎԵ — Դ. Վարուժան, Երկեր, Երևան, 1958:

ԵԵ — Երուխան, Երկեր, Երևան, 1980:

ԵՔԺԵ — Ե. Քոչևան, Ժամանակ և շրջապատ, Պէյրուս, 1971:

ԵՕԸՓ — Ե. Օտյան, Ընկեր փանդունի, Երևան, 1989:

ԶԵԵ — Զ. Եսայան, Երկեր, Երևան, 1959:

ԹԲԱԵ — Լ. Թլկատինցի, Բաշայան, Առանձնաբեր, Երկեր, Երևան, 1983:

ԼԵԸԵ — Լ. Եանթ, Ընտիր երկեր, Երևան, 1962:

ՀՊԵ — Հ. Պարոնյան, Երկեր, հ. 3, Երևան, 1964:

Մ — Միություն (ամսագիր), Պոլիս, 1989, № 11:

ՄՄԵ — Մ. Մեծարենց, Երկեր, Երևան, 1986:

ՆՍԵ — Ն. Սարաֆյան, Երկեր, Երևան, 1988:

ՍՐ — Սփյուռքահայ բանաստեղծություններ (ժողովածու), Երևան, 1981:

ՍԳ — Սփյուռքահայ գրականություն, Երևան, 1985:

ՍՊ — Սփյուռքահայ պատմվածքներ, հ. 2, Երևան, 1986:

ՍՓ — Սփյուռք (ամսագիր), 1990, № 10:

ՎԹԵ — Վ. Թեքեյան, Երկեր, Երևան, 1958:

КОНСТРУКЦИИ ПРЕДЛОЖНЫХ СЛОВСОЧЕТАНИЙ С ИМЕНАМИ СУЩЕСТВИТЕЛЬНЫМИ В ЗАПАДНОАРМЯНСКОМ ЯЗЫКЕ

А. Ж. МУРАДЯН

Резюме

Предложно-именные конструкции являются одним из самых продуктивных образований в западноармянском языке. Компоненты этих конструкций (отглагольные или отдъективные существительные) с развитием языка прошли сложный путь абстрагирования в семантическом и синтаксическом планах, приобретая новые качества, о чем свидетельствует функциональная продуктивность данной модели — особенно в научном стиле.

Выражая атрибутивные, объектные и обстоятельственные отношения, эти конструкции по способу образования сродни грабару и среднеармянскому языку. Однако, охватывая большое количество предлогов, они выражают многочисленные семантико-синтаксические отношения, что подтверждает продуктивность и жизнеспособность этих конструкций в западноармянском языке.